Միքայել Նալբանդյան

Կնդուկ պոչատի և նորա Սանչոյի մկրտությունը

«Կնդուկ պոչատն է գալիս,
Ճամփա տուր, է՛, մե՛ր տղա,
Տե՛ս, հետն էլ ո՞ւմ քաշ տալիս» .
Աստվա՛ծ, ճի՛շտ Սանչո Պանսա:
«Ասա՛, Հաճի Կարապետ,
Ո՞ւր են կիտվել այդ հիմարք,
Ուզում են կռվե՞լ մեր հետ .
Ա՛հ, խելագար ապստամբք:
Ուզո՞ւմ են, որ մի խոսքով
Դորանց դժոխք ուղարկեմ,
Կամ նզովքի շանթերով
Շան սատակնե՞րը հանեմ»:
Տե՛ր իմ, խնայե՛, հոգևոր
Մի՛ տալ պատիժ խիստ սաստիկ .
Մի՞թե չկա մարմնավոր
Մի ուրիշ հնար փոքրիկ .
Մի թուղթ, մի պստիկ նամակ . . .
Մի քանի սո՛ւտ . . . ի՞նչ վնաս . . .
Մյուսներին էլ օրինակ . . . —
Խոսքը բերանը մնաց:
«Տո՛, այդ կնդուկ պոչատին
Քաշեցեք կպրե կարաս,
Մի բաբաթի մկրտվին

Սանչու հետ, փառաց ի փառս»:
Լոթին գոռաց այն կողմից,
Սանչու լերդին ջուր գնաց .
Մոգին էլ չտվե՞ց մի կից,—
Գլո՛ւնձ ի կպրե կարաս: